**Արձանագրություն N 4**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-04» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «21» դեկտեմբերի 2016թ.
ժամը՝ 18:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Արման Հարությունյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Խորեն Պետրոսյանը՝ ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ:*

**1. Տեղեկատվություն՝ Հայտերում արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելու վերաբերյալ.**

1.1 «Յուքոմ» ՍՊԸ-ն և «ԱրմենՏել» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում շտկել են իրենց հայտերում արձանագրված անհամապատասխանությունները, հետևաբար նշված մասնակիցների հայտերը գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.**

**2.1.** **1-ին** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Յուքոմ» ՍՊԸ-ին.
**1-ին** չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱրմենՏել» ՓԲԸ-ին.

**2.2.** **2-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱրմենՏել» ՓԲԸ-ին:

**2-րդ** չափաբաժնի մասով հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված այլ հայտեր չկան::

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3. Հանձնաժողովի քարտուղարին.**

**3.1** Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը:

**3.2** Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի դեկտեմբերի 27-ը ներառյալ, ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովի նիստ կիրավիրել 2016 թվականի դեկտեմբերի 29-ին, ժամը՝ 10:00-ին:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Էդգար Տոնականյան

Անդամներ՝

Սարգիս Արմենակյան

Արթուր Թամրազյան

Արման Հարությունյան

Քարտուղար՝ Մարիամ Հայրապետյան